

ամենայն ծոյլ եւ յոռի վատթար արանց» (131) :

Այստեղից պարզ է, թէ ինչո՞ւ գիրքը «Որոգայթ փառաց» է կոչուում եւ թէ ինչո՞ւ այդ անուանը անմիջապէս կցուած է՝ «Վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան» բացատրութիւնը, որովհետեւ գիրքը հեղինակի կողմից նախասահմանուած է որպէս միջոց՝ մարդկային բոլոր չարագործութիւնները կանխելու եւ արգելելու :

Հարց է, թէ ինչո՞ւ գրքի անուան մէջ «Որոգայթ» բառին աւելացրած է «Փառաց» յատկացուցիչը: Դրա պատասխանը — մեր կարծիքով — պիտի որոնել երկու պատճառների մէջ. — առաջին՝ դրուածքի նիւթը կազմում են գլխաւորապէս իշխանութիւնը եւ իշխանութեան հետ կապուած խնդիրները. այլ խօսքով՝ փառքի հետ կապուած խնդիրներ: Հետեւապէս անհրաժեշտ է, որ ամենից առաջ արգելք-որոգայթներ դրուէին մարդու իշխանասիրական կամ փառասիրական չար ձգտումները սանձահարելու համար:

Միւս պատճառը՝ որ հեղինակը փառասիրութիւնը նկատում է որպէս մարդկային բնաւորութեան ամենախոշոր բացասական գծերից մէկը, որից ծնունդ են առնում անհամար չարիքներ՝ մարդու եւ ժողովուրդների համար: Փառասիրութիւնից դրդուած է, որ մարդը, հակառակ իր «բանական բնութեան», ձգտում է իշխել իր նմանների վրայ, որ յանցանքներից մեծագոյնն է: «Մի ոք ձգտեցէ թագաւորել ի վերայ բանական բնութեան մարդոյ, որ մեղք մեծ է, քանի թագաւորել ի վերայ բանական բնութեան մարդոյ միմիայն գործ Աստուծոյ է» (43) — բացականչում է նա:

Այսպէս ուրեմն, գրքի գլխաւոր նպատակն է՝ արգելք դնելով առաջն առնել մարդկային բոլոր չարագործութիւնների, յատկապէս փառքից կամ փառասիրութիւնից բխող չարագործութիւնների: Այդ պատճառով էլ հեղինակը իր գիրքը խորագրել է՝ «Որոգայթ փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան»:

Գալով գրքի վերջաբանին՝ պիտի ասենք, որ հեղինակը այստեղ եւս չեւտում է այն դժուարութիւնները, որոնք պատճառ են եղել գրքի թերութիւններին: Դրանք գլխաւորապէս երկուս են. 1. որ ինքը, առեւտրական մարդ

լինելով, անձանօթ է շարադրութեան արհեստին եւ հայոց լեզուին. 2. որ տպարանում չի ունեցել գործին եւ հայերէնին հմուտ օգնականներ, բացի երկու սիւսմացի «սպասաւորներից», որոնք տպագրական արհեստին անտեղեակ եւ իրենց համար բոլորովին օտար լեզուով — ինչպիսին հայերէն լեզուն է — հազիւ այդքանը կարողանային գլուխ բերել:

Այնուհետեւ, նոյն վերջաբանում, մեր հեղինակը խնդրում է Աստծուն՝ ազատել հայ ժողովրդին օտարի լծից, «նախանձայոց» անել հայ դպիրներին եւ աւելի կարողներին, որ չարագրեն «ազատութեան յորդորներ» հայ ազգի համար, եւ տալ հայերին «սիրտ սուրբ եւ հոգի զուարթ», որպէսզի «սիրով հնազանդին օրէնքներին եւ ազատեն այլազգիների լծից»:

«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ»Ի ԳՐԱԿԱՆ ԱՄԺԷՔԸ

Գրական երկասիրութիւնների տեսակէտից շատ դժուար է բնորոշել, թէ գրականութեան ո՞ր ձիւղին կամ գրական երկերի ո՞ր սեռին է պատկանում «Որ. Փառաց»ը: Երկրորդ հատորի կամ երկրորդ բաժնի մասին արդէն խօսք չի էլ կարող լինել, որովհետեւ նա մի տեսակ գործնական ուղեցոյց է, մի հաւաքածու գնահատան օրինապետների եւ պաշտօնական թղթերի նմոյշների:

Ինչ վերաբերում է Ա. մասին, պէտք է խոստովանենք, որ նրա գրական սահմանումն էլ շատ դժուար է: Աւելի շուտ՝ նա մի հրապարակախօսութիւն է, քաղաքական մի ընդարձակ յօդուած, ուր Շահաձիբեանը ներկայացնելով Հայաստանի ծանր վիճակը եւ նրա պատճառները, առաջարկում է իր միջոցները՝ այդ վիճակից դուրս գալու համար:

Գրութեան ձեւը չափազանց անյաշող է — ձգձգուած, կրկնութիւններով լի, ճապող, խրթին, երկարաչունչ պարբերութիւններով, Ա. Գրքի վկայութիւններով յաճախ ընդհատուած ու ծանրաբեռնուած: Լեզուն չափազանց անկանոն է, անհարթ, յաճախ բառերի սխալ եւ անտեղի գործածութեամբ, իսկ աւելի յաճախ՝ ոճական ու քերականական անհամար սխալներով: Դրա համար էլ «Որ. Փառաց»ը դժուար հասկանալի եւ քիչ կարդացուող մի գիրք է: Նոյն հատուածը երբեմն մի քանի ան-